



«ԵՐԵՎԱՆԻ ՋԵՐՄԱԷԼԵԿՏՐԱԿԵՆՏՐՈՆ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

**«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի ՀՇԳՑ էներգաբլոկի
սարքավորումների նորոգման ծառայության
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ**

Տեխնիկական բնութագիր

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար

ՀՇԳՑ էներգաբլոկի սարքավորումների նորոգման ծառայության

ԲԱԺԻՆ 1. ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ ՀԱՄԱՁԱՅՆ ԿԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԾԱՎԱԼԱԹԵՐԹԻ

«Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի ՀՇԳՑ էներգաբլոկի սարքավորումների նորոգման ծառայություն

ԲԱԺԻՆ 2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ

Սույն Տեխնիկական բնութագրերով մատուցվող ծառայության պատվիրատու և օգտագործող է հանդիսանում «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ :
Նորոգումն իրականացնում է մրցույթը շահած կազմակերպությունը:

Ենթաբաժին 2.1 Տեղեկություններ Ծառայության իրականացման վայրի վերաբերյալ

2.1.1. Ծառայությունն իրականացվում են Հայաստանի Հանրապետությունում՝ «Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ -ում:

2.1.2. Ծառայության իրականացման վայրը՝ ՀՀ, քաղաք Երևան, ՀՇԳՑ էներգաբլոկի տարածք:

ԲԱԺԻՆ 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

Ենթաբաժին 3.1 Ծառայության իրականացման ընթացքում գործող տեխնիկական պահանջները

3.1.1. Ծառայությունն իրականացնող կազմակերպությանը ներկայացվող պահանջները

3.1.1.1. Ծառայության իրականացման թույլտվություն է ստանում այն անձնակազմը, որը սահմանված կարգով ուսուցում և պատրաստում է անցել, ունի ինքնուրույն Ծառայության թույլտվության հավաստագրեր , անցել է բժշկական զննություն:

3.1.1.2. Կատարողը պետք է իրականացնի կազմակերպչական և տեխնիկական միջոցառումներ, որոնք ապահովում են Ծառայության անվտանգությունը՝ ՀՀ-ում գործող անվտանգության կանոնների պահանջներին համապատասխան:

3.1.1.3. Կատարողը «ԵրՋԷԿ»-ին է տրամադրում սարքավորումների նորոգման Ծառայություն մատուցող անձանց ցուցակը (ապահովելով ծավալաթերթով նախատեսված Ծառայության իրականացման համար անհրաժեշտ քանակությամբ անձնակազմ),

3.1.1.4. Կատարողը պետք է ունենա գործիքների, հանդերձանքի, չափիչ սարքերի (ստուգաչափված) անհրաժեշտ համակազմ և հարմարանքներ՝ նորոգման Ծառայության մատուցման համար:

3.1.2. Պլանավորում, վերահսկում և հաշվետվություն

3.1.2.1. Կատարողը աշխատում է «ԵրՋԷԿ»-ի կողմից հաստատված նորոգման ժամանակացույցով:

3.1.2.2. Կատարողի կողմից կատարվող բոլոր Ծառայությունները պետք է պլանավորվեն՝ հաշվի առնելով.

- կայանի՝ վերանորոգման, փորձարկման ժամանակացույցները և պարտադիր կերպով պետք է համաձայնեցվեն «ԵրՋԷԿ»-ի համապատասխան պատասխանատուների հետ,
- 3.1.2.3. Ծառայության համակարգումն իրականացվում է կատարող կազմակերպության, ԵրՋԷԿ-ի պատասխանատուների և արտադրող գործարանների պատասխանատուների կողմից:

3.1.3. Ծառայության իրականացման կարգը

- 3.1.3.1. Կատարողը Ծառայության ավարտից հետո մասնակցում է փորձարկումներին:
- 3.1.3.2. Կատարողը իրականացնում է քանդման, հավաքման և վերանորոգման Ծառայություն:
- 3.1.3.3. Կատարողը կազմում և «ԵրՋԷԿ»-ին է տրամադրում հաշվետու տեխնիկական փաստաթղթերը, որը հանդիսանում է հանձնման-ընդունման ակտի անբաժանելի մաս:

ԲԱԺԻՆ 4. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՑՄԱՆ ԾԱՎԱԼԸ

- 4.1. Ծառայության ծավալը պետք է համապատասխանի պայմանագրին կից ծավալաթերթին:
- 4.2 Ծավալաթերթում 1-18 և 25-27 կետերով նշված սարքավորումների նորոգումը պետք է կատարվի արտադրող գործարանի կողմից գործուղված մասնագետների անմիջական ղեկավարության տակ: Այդ մասնագետների բացակայության դեպքում տվյալ սարքավորումները կհանվեն նորոգման ծավալներից:

ԲԱԺԻՆ 5. ՆՅՈՒԹԵՐԻՆ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

- 5.1. Հատուկ գործիքներն ու պահեստամասերը տրամադրում է ԵրՋԷԿ-ը:
- 5.2 Ստանդարտ գործիքները և Ծառայության մատուցման համար անհրաժեշտ արագամաշ սպառվող և մաքրող նյութերը տրամադրում է կատարողը:

ԲԱԺԻՆ 6. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

- 6.1. Ծառայություն իրականացնելու ընթացքում պայմանագրով Ծառայության կատարման և զբաղեցրած շինությունների և շենքերի, իրեն կցված տարածքների և հաղորդակցուղիների շահագործման ժամանակ Կատարողը, գործող օրենսդրության համաձայն, պատասխանատվություն է կրում Հայաստանի Հանրապետության՝ շրջակա միջավայրի պահպանության բնագավառում գործող օրենքների և այլ օրենսդրական ակտերի ու նորմատիվ փաստաթղթերի պահանջների խախտման համար:
- 6.2. Ծառայության ընթացքում պետք է բացառել անթույլատրելի կոնցենտրացիա առաջացնող քանակի ագրեսիվ, քիմիապես ակտիվ աերոզոլների, գազերի մուտքը աշխատատեղեր և անձնակազմի գտնվելու տարածքներ:
- 6.3. Ծառայության ընթացքում պետք է բացառել քիմիապես ակտիվ հեղուկների (նավթամթերքներ, թթուներ, ալկալիներ, լվացման ջրեր և այլն) թափանցումը և դրանցով շենքերի, կառույցների, կոնստրուկցիաների տարրերի, ինչպես նաև սարքավորումների մակերևույթների տոգորումը:
- 6.4. Իրականացվող Ծառայության ընթացքում և ավարտից հետո գոյացող բոլոր թափոնները պետք է մեկուսացվեն և/կամ օգտահանվեն՝ համաձայն «ԵրՋԷԿ»-ում գործող կանոնակարգերի, հրահանգների, սխեմաների:

ԲԱԺԻՆ 7. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ

7.1. Ծառայության իրականացման ժամկետները սահմանվում են Պայմանագրի Օրացուցային գրաֆիկով:

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ՀՀԳՑ էներգաբլոկի սարքավորումների նորոգման ծառայության

N ը/կ	Կատարողի կողմից կատարվելիք Ծառայության առանձին տեսակների անվանումներ	Ծառայության կատարման ժամկետը
1	HPFWP Բարձր ճնշման սնուցման պոմպ B	Ծառայության սկսման օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում
2	LPFWP Ցածր ճնշման սնուցման պոմպ B	Ծառայության սկսման օրվանից 12 աշխատանքային օրվա ընթացքում
3	COP Կոնդենսատի պոմպեր B, C	Ծառայության սկսման օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում յուրաքանչյուրը
4	Վակուում պոմպեր A, B	Ծառայության սկսման օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում յուրաքանչյուրը
5	CCWP Փակ հովացման համակարգի պոմպ A	Ծառայության սկսման օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում
6	Փականներ, կափույրներ, սողնակներ	Ծառայության սկսման օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում
7	Մետաղի ստուգում	Համապատասխան Կարանի ավարտից հետո 1 օրվա ընթացքում
Ծառայության մատուցման ընդհանուր ժամանակահատվածը		01.09.2026 -:- 23.09.2026

7.2. Նորոգման Ծառայությունը պետք է կատարվի միաժամանակ տարբեր տեսակի պոմպերի և սարքավորումների վրա:

7.3. Նույնատեսակ պոմպերի նորոգման Ծառայությունը պետք է կատարվի հաջորդաբար:

7.4. Ընկերությունը հանդիսանում է ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի մաս և գործում է «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի օպերատիվ ենթակայության ներքո, որից հետևում է, որ Օրացուցային գրաֆիկով սահմանված Ծառայության

ԲԱԺԻՆ 8. ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

- 8.1. Ծառայության իրականացումը պետք է լիովին համապատասխանի պայմանագրին կից ծավալաթերթին,
- 8.2. Իրականացվող Ծառայության որակի ապահովումն իրականացվում է Կատարողի կողմից և վերահսկվում է «ԵրՋԷԿ»-ի և արտադրողի համապատասխան անձնակազմի կողմից (յուրաքանչյուրն իր պատասխանատվության սահմաններում):

ԲԱԺԻՆ 9. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

- 9.1. Ծառայությունը կարող է իրականացվել աշխատող սարքավորումների անմիջական մոտակայքում, որի կապակցությամբ Կատարողը պետք է ապահովի անվտանգության բոլոր պահանջների անվերապահ կատարումը, ինչպես նաև «ԵրՋԷԿ»-ում գործող համապատասխան փաստաթղթերում նշված տեխնիկական և տեխնոլոգիական սահմանափակումների պահպանումը:
- 9.2. Ծառայության իրականացման ընթացքում պետք է երաշխավորվի բնականոն սխեմայով շահագործվող հարակից համակարգերի և սարքավորումների վրա որևէ ազդեցության բացակայությունը:
- 9.3. Ծառայության իրականացման ընթացքում պետք է բացառվի սարքավորումների, շինարարական կառուցատարրերի և տրանսպորտային հաղորդակցողիների վնասումը:
- 9.4. Պատվիրատուին վերադարձնել հանված հին դետալները, իսկ Ծառայության ավարտից հետո՝ հատուկ գործիքները և հարմարանքները սարքին, աշխատունակ վիճակում համաձայն հանձնման-ընդունման ակտի: Կորստի կամ վնասման պարագայում կատարողը պարտավորվում է փոխհատուցել վնասված մասի արժեքը:
- 9.5. Ծառայության ավարտից հետո Կատարողը պետք է հավաքի կողմնակի առարկաները, և պետք է վերականգնվեն նորոգման ընթացքում ապամոնտաժված բոլոր սարքավորումներն ու կառուցատարրերը:
- 9.6. Ծառայության ընթացքում գոյացած աղբը Կատարողը պարտավոր է պարբերաբար հեռացնել «ԵրՋԷԿ»-ի տարածքից, բացառությամբ արտադրական վտանգավոր թափոններից:

ԲԱԺԻՆ 10. ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԻՆ ԵՎ ԾԱՎԱԼԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

- 10.1. Կատարողը պատասխանատվություն է կրում մատուցված ծառայության ոչ պատշաճ իրականացման համար՝ ներառյալ երաշխիքային ժամանակահատվածում օբյեկտի շահագործման ընթացքում հետագայում հայտնաբերված թերությունները:
- 10.2. Կատարողի կողմից իրականացված Ծառայության երաշխիքային ժամկետը կազմում է ոչ պակաս, քան 365 օր՝ Հանձնման-ընդունման ակտը ստորագրելու պահից սկսած:
- 10.3. Տրված երաշխիքի գործողության ժամանակահատվածում նորոգված սարքավորումների Ծառայության ոչ պատշաճ որակով պայմանավորված շեղումներ (արատներ, առանձին գործառույթների կորուստ, կանոնակարգված պարամետրերին չհասնելը, վնասվածքներ, խափանումներ, վթարներ և այլն) հայտնաբերելու դեպքում Կատարողը պարտավոր է իր հաշվին վերացնել հայտնաբերված անհամապատասխանությունները և դրանց հետևանքները:
- 10.4. Եթե կատարողի կողմից թույլ տրված շեղումների պատճառով «ԵրՋԷԿ»-ը ֆինանսական կորուստներ կրի, կորուստների փոխհատուցումը կիրականացվի Կատարողի հաշվին:

ԲԱԺԻՆ 11. ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

- 11.1. Ծառայության մատուցման ընթացքում Կատարողը պետք է առաջնորդվի Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի պահանջներով, որոնք կանոնակարգում են Ծառայության որակը, անվտանգ կատարումը և նորոգման Ծառայության ավարտից հետո օբյեկտների շահագործման ընդունումը:
- 11.2. Ծառայությունը պետք է կատարվի միայն ձևակերպված կարգագրի (հրամանի) առկայության դեպքում՝ «ԵրՋԷԿ»-ում գործող կարգի համաձայն անվտանգության տեխնիկայի կանոնների և հրդեհային անվտանգության միջոցների պահպանմամբ:
- 11.3. Ծառայության իրականացման ընթացքում ներգրավված անձնակազմի անվտանգության ապահովումը Կատարողի պարտականությունն է: «ԵրՋԷԿ»-ն իրավունք ունի կասեցնել Կատարողի կողմից կատարվող Ծառայության անվտանգության պահանջների այնպիսի խախտումներ հայտնաբերելու դեպքում, որոնք սպառնում են անձնակազմի առողջությանը, սարքավորումների, շինարարական կառուցատարրերի ամբողջականությանը և/կամ կարող են վնաս հասցնել շրջակա միջավայրին:
- 11.4 Ծառայության մատուցման ընթացքում Կատարողը հսկում է՝ ԵրՋԷԿ-ը վերահսկում անվտանգության պահանջների պահպանումը:

ԲԱԺԻՆ 12. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

- 12.1. Մատուցված Ծառայության ընդունումն իրականացվում է հանձնման-ընդունման ակտի ձևակերպմամբ, որը կազմվում է փաստացի մատուցված Ծառայության ծավալով: Ծավալաթերթ նախահաշվում ներկայացված բայց փաստացի չկատարված առանձին Ծառայության տեսակները չեն կարող ներառվել հանձնման ընդունման ակտում
- 12.2. Կատարողի կողմից «ԵրՋԷԿ»-ի ընդունող հանձնաժողովին ներկայացվող կատարողական փաստաթղթերի լրակազմի նախնական ցանկը պետք է համաձայնեցվի «ԵրՋԷԿ»-ի հետ:
- 12.3. Ավարտված Ծառայության արդյունքում սարքավորումների պարամետրերը պետք է համապատասխանեն նախագծային և աշխատանքային փաստաթղթերի դրույթներին և պահանջներին:
- 12.4. Հաշվետու փաստաթղթերի կազմը և ծավալը պետք է համապատասխանեն «ԵրՋԷԿ»-ում գործող նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի դրույթներին և պահանջներին և պետք է համաձայնեցված լինեն «ԵրՋԷԿ»-ի հետ:

ԲԱԺԻՆ 13. ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՁԵՎԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

- 13.1. Կատարողի կողմից մշակված բոլոր փաստաթղթերը «ԵրՋԷԿ» փոխանցելուց առաջ պետք է պատշաճ կերպով ձևակերպված և ստորագրված լինեն կատարողների, ստուգողների, համաձայնեցնող և հաստատող անձանց կողմից:

Ծավալաթերթ-նախահաշիվ

« Երևանի ՋԷԿ» ՓԲԸ-ի ՀՇԳՑ էներգաբլոկի սարքավորումների նորոգման ծառայության

No	Աշխատանքի անվանումը	Չափման միավորը	Քանակը	Նախահաշվային արժեքը ընդհանուրի նկատմամբ %-ներով
1	2	4	5	6
1	I. Պտտվող մեխանիզմներ			17.0692
2	Ցածր ճնշման սնուցման պոմպ "B"			
3	Արտածման և ներածման խողովակների անջատում և միացում $\Phi 190 \times 10$ մմ, l=4մ,	տ	0.09	
4	Հովացման ջրի խողովակների ֆլանեցների քանդում և միացում $\Phi 3/4$ "	հատ	5	
5	Հանքաբամբակե մետաղական քիվով Ջերմային մեկուսացման քանդում և հավաքում	մ ²	0.1	
6	(LP FWP "A" WKS 65/4 (DSB) տիպի 67մ3, 16,5 մթն ճնշման) պոմպի ագույցի, պոմպի բոլոր մասերի կազմատում/ռոտորի կազմատումով/, մաքրում, արատորոշում թերությունների վերացում, մաշված դետալների փոխարինում, մակերևույթների կցորդման կիպության վերականգնում, հավաքում, կենտրոնադրում, միացում, փորձարկում	հատ	1	
7	Ֆիլտրի ֆլանեցի / $\Phi 380$ մմ/ քանդում, էլեմենտների մաքրում հավաքում	հատ	1	
8	Բարձր ճնշման սնուցման պոմպ "B"			38.8990
9	Արտածման և ներածման խողովակների անջատում և միացում $\Phi 350 \times 10$ մմ, l=6մ,	տ	0.26	
10	Հովացման ջրի և յուղի խողովակների ֆլանեցների քանդում և միացում $\Phi 1/2$ "	հատ	12	
11	Հանքաբամբակե մետաղական քիվով Ջերմային մեկուսացման քանդում և հավաքում	մ ²	0.15	
12	(HGC4/1+9 տիպի 290մ3, 100 մթն ճնշման) պոմպի ագույցի, պոմպի բոլոր մասերի կազմատում/ռոտորի կազմատումով/, մաքրում, արատորոշում թերությունների վերացում, մակերևույթների կցորդման կիպության վերականգնում: Հավաքում, կենտրոնադրում, միացում, փորձարկում	հատ	1	
13	Ֆիլտրի ֆլանեցի / $\Phi 630$ մմ/ քանդում, էլեմենտների մաքրում հավաքում	հատ	1	
14	Կոնդենսատի պոմպեր "B", "C"			30.1803

15	(WKT 150/2 տիպի Vertical barrel type, 145մ ³ /ժ) պոմպի ագույցի անջատում, շարժիչի հանում, պոմպի բոլոր մասերի կազմատում/ռոտորի կազմատումով, մաքրում, արատորոշում թերությունների վերացում, մակերևույթների կցորդման կիպության ստուգում, վերականգնում: արատավոր մասերի փոխարինում, հավաքում, կենտրոնադրում, միացում, փորձարկում	հաս	2	
16	Հովացման ջրի խողովակների ֆլանեցների քանդում և միացում $\Phi 1/2"$	հաս	14	
17	Արտածման և ներածման ֆլանեցների անջատում և միացում $\Phi 250 \times 10$ մմ,	հաս	4	
18	Ֆիլտրի ֆլանեցի / $\Phi 555$ մմ/ քանդում, էլեմենտների մաքրում հավաքում	հաս	2	
19	Վակուում պոմպեր "A", "B"			3.4505
20	Վակուումային TRHE 100 1600/X-C/F տիպի պոմպի ագույցի, պոմպի բոլոր մասերի կազմատում /առանց ռոտորի կազմատման/, մաքրում, արատորոշում թերությունների վերացում, մակերևույթների կցորդման կիպության ստուգում, վերականգնում: արատավոր մասերի փոխարինում, հավաքում, կենտրոնադրում, միացում, փորձարկում	հաս	2	
21	Արտածման և ներածման խողովակների անջատում և միացում $D108 \times 4$ մմ, $l=2.5$ մ	տ	0.025	
22	CCWP Փակ հովացման համակարգի պոմպ "A"			8.3838
23	NDV 400E1 տիպի 1240մ ³ /ժ, 32մ, պոմպի միացնող ագույցի, պոմպի կազմատում /ռոտորի կազմատումով/, մաքրում, արատորոշում թերությունների վերացում, մաշված դետալների փոխարինում, մակերևույթների կցորդման կիպության, վերականգնում: Հավաքում, կենտրոնադրում, միացում, փորձարկում	հաս	1	
24	II. Փականներ, կափույրներ, սողնակներ			1.5456
25	HP dump bypass, Valve type-VLB - 125BTC, $Dy=300$, $Py=76$ bar, կափույրի շարժաբերի քանդում, կափույրի հանում, կազմատում, արատավոր դետալների փոխարինում, թամբերի հղկում, հավաքում տեղադրում և փորձարկում	հաս	1	

26	HP dump bypass TCV Type-AB300-D10R, Dy=80, Py=108bar, արմատուրաի շարժաբերի քանդում, կափույրի հանում, կազմատում, արատավոր դետալների փոխարինում, թամբերի հղկում, հավաքում տեղադրում և փորձարկում	հատ	1	
27	LP dump bypass TCV, Type-AB300-D06R, Dy=25, Py=14bar, արմատուրաի շարժաբերի քանդում, կափույրի հանում, կազմատում, արատավոր դետալների փոխարինում, թամբերի հղկում, հավաքում տեղադրում և փորձարկում	հատ	1	
28	Էկոնոմայզերի դրենաժի կոլեկտորի DN 80, P90bar փականի փոխարինում նորով եռակցման միջոցով(արգոնի միջավայր)	հատ	1	
29	ՇՏ բարձր ճնշման շոգու DN 40, P78bar դրենաժի (warming up) փականի 10LBA13AA001 փոխարինում նորով եռակցման միջոցով(արգոնի միջավայր)	հատ	1	
30	Դեարատորի լրասնուցման կարգավորիչ փականի 10LCP28AA901 փոխարինում նորով եռակցման միջոցով(արգոնի միջավայր) DN200, P24 bar	հատ	1	
31	Ջերմամեկուսացման խեմերի հանում, ուղղում, և տեղադրում	մ ²	0.80	
32	Հանքաբամբակե քուղերի հանում և տեղադրում	մ ³	0.040	
33	Կարանների երկու կողմերից մինչև 70 մ տեղամասով մետաղի մաքրամշակում մինչև մետաղական փայլը:	դմ ²	30.5	
34	III. Մետաղի ստուգում			0.4716
35	DN200 խողովակի կարանների ՈւՋԱ	կարան	2	
36	DN80 խողովակի կարանների ՈւՋԱ	կարան	2	
37	DN40 խողովակի կարանների ՈւՋԱ	կարան	2	
38	DN200 խողովակի կարանների ԳԱ	կարան	2	
39	DN80 խողովակի կարանների ԳԱ	կարան	2	
40	DN40 խողովակի կարանների ԳԱ	կարան	2	
41	Փականների, կափույրների, սողնակների փոխարինվող թամբերի և այլ միացությունների մետաղի Գունավոր արատանշում	դմ ²	15	

Ծանոթացում՝ - Պոմպերի նորոգման ժամանակ էլեկտրական շարժիչների հանումը և տեղադրումը կատարում է կապալառուն:

Արմատուի նորոգման ժամանակ ժարժաբերի հանում և տեղադրումը կատարում է կապալառուն

- Նորոգման աշխատանքներն իրենց մեջ ներառում են սարքավորումների մասերի կազմատում, մաքրում, լվացում, արատաորոշում, արատավոր դետալների փոխարինում, հավաքում: - Նորոգման ընթացքում մաքրման աշխատանքների համար օգտագործվող նյութերը տրամադրում է կապալառուն:

- Նորոգման ընթացքում օգտագործվող ընդհանուր օգտագործման (ստանդարտ) գործիքները տրամադրում է կապալառուն, (բացի հատուկ գործիքներ, սարքվածքները հարմարանքներ և այլն)